

Աստուածային խօսքի փրկարար ոյժին, և կամ եթէ գիտնանք մեր կեանքի նաւուն ղեկը յանձնել Աստուածորդիին, որովհետեւ միայն այն ատեն է որ պիտի ըլլանք բարեփոխուած անձեր:

Մեծ Պաշտօն, սիրելի հաւատացեալներ, մեզի կը թելադրէ բարի գործեր կատարել, աղօթել և պահեցողութիւն ընել, և այս բոլորը կատարել գաղտնի, եթէ անպայմանօրէն կ'ուզենք որ ծառայեն իրենց նպատակին և մեզի ցոյց տան երկնքի ճամբան: Այս բարեմասնութիւնները, որոնք կը շնորհազարդեն քրիստոնեայ հաւատացեալը, պէտք է անպայմանօրէն մաս կազմեն մեր առօրեային, ապա թէ ոչ մեր աղօթքները պիտի արձագանգեն անհասցէ ու կորսուին անհունին մէջ:

Մեծ Պաշտօն չըջանին Հայր Աստուած մեզմէ իւրաքանչիւրին կարելիութիւններ և հրաւէր կու տայ դառնալու Նոր Մարդ: Ան մեզի կ'ընծայէ քառասուն օրերու շնորհքի չըջան մը ըլլալու այն ինչ որ ինք կը կամենայ և ոչ թէ մեր կամեցածը: Թող Աւետարանի կոյսերուն առակը օրինակ Հանդիսանայ մեզմէ իւրաքանչիւրիս, ըլլալու միշտ պատրաստ որպէսզի կարողանանք յարութիւն տալ մեղքի գերեզմանին մէջ ինկած մեր Հոգիներուն և արժանանալու յարութեան արշալոյսին և գովերգելու փառքը Յարուցեալ Փրկչին:

ՆՈՒՐՀԱՆ ԵՊՍ.

ԻԱ.

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ն. աստղագետ մը ըսաւ. «Իսկ ժամանակի մասի՞ն, Վարդապետ»։ Ն. ան պատասխանեց. «Կ'ուզէ՞ չափել անսահման ժամանակը, որ անչափելի է։ Կը փափաքի՞ք յարմարցնել ձեր ապրեակերպը եւ վարմունքը եւ միմէն իսկ կ'ուզէ՞ք ուղղել, ճշդել ձեր հոգիին ընթացքը ժամերու եւ եղանակներու համաձայն։ Ժամանակէն դուք կը փափաքի՞ք առեակ շինել, որուն ափին կ'ուզէ՞ք նստիլ եւ դիտել ամբողջ հասարակը։ Սակայն անժամանակը ձեր մէջ գիտէ՞ք կեանքին անեղբայրութիւնը, ու գիտէ՞ք նաեւ որ երէկը այսօրուան յաշմ է, իսկ վաղը՝ այսօրուան երազը։ Ու թէ՛ այն որ կ'երգէ ու կը խորհրդածէ ձեր մէջ, տակաւին կ'ապրի հունին մէջ այն առաջի՞ն պահին, որ սփռեց աստղերը միջոցին մէջ։ Ձեզմէ ո՞վ չի գգար, որ իր սիրելու գործութիւնը անհուն է, սակայն ո՞վ չի գգար որ, այդ նոյն սէրը, թէեւ անհուն, պարփակուած է իր էութեան կեդրոնին մէջ, եւ կը շարժի ո՛չ թէ սիրոյ խորհուրդէ մը՝ այլ սիրոյ խորհուրդի, եւ ոչ ալ սիրոյ արարքէ մը՝ այլ ուրիշ սիրոյ արարքի։ Ն. ժամանակը արդեօք չէ՞ ալ մտաւ, ինչպէս սէրը՝ անբաժանելի եւ անչափելի։ Բայց եթէ ձեր մտածումին մէջ պէտք է չափէ՞ք ժամանակը եղանակներով, թո՛ղ որ իւրաքանչիւր եղանակ պարփակէ բոլոր միւս եղանակները, եւ թող որ Այսօրը ընդգրկէ անցեալը՝ յաշմով, եւ ապագան՝ կարօտով։

«Մարգարէն» Խալի Ճիպրան էջ 46

Թրգմ. Բագրատ Արդ. Պուրմէքեան